ՍԱՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱԶԱՐՎԵՑՀԱՐՑՈՒՐԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին, շաբաթ օրը, Սրբոց Թարգմանչաց վարդապետաց տոնի առթիվ, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը, արտասահմանյան մի շարք երկրներից ժամանած ուխտավորներ, հայ մտավորականության ներկայացուցիչներ ուխտի գնացին Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանին։

Առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Մեծ Սրբի ծննդյան 1600-ամյակի առթիվ, հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում։ Սուրբ Սեղանին սպասարկում էին գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս սրբազանները, վարդապետներ, քահանա հայրեր և Մայր Աթոռի սարկավագների խումբը։

Օրվա ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ Օշականում հավաքվել էր ուխտավորների խուռն բազմություն։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էին Հոգևոր Ճեմարանի սաները։ «Հայր մեր»-ից առաջ, հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Եղիայանը, ի լուր ժողովրդյան, կարդաց Վեհափառ Հայրապետի օգոստոս 25 թվակիր սրբատառ կոնդակը՝ հոկտեմբերի 14-ին Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը տոնելու կապակցությամբ։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, իջավ Մեծ Սրբի դամբարանը, աղոթեց, համբուրեց և ապա բակում, Վահան Ամատունու գերեզմանի վրա «Հոգւոց» արտասանելուց հետո, հանդիսավոր երթով վերադարձավ Մայր Աթոռ։



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՏԱՐԱԳՈՒՄ Է ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ



ՄԻ ՊԱՀ ՊԱՏԱՐԱԳԻՑ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀՈՒՄ

Ժամը 2-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված ընդհանրապես մեր թարգմանիչ վարդապետների հիշատակին և ի մասնավորի թարգմանիչ վարդապետների գլուխ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։

Հանդիսությանը ներկա էին Տ. Սիոն, Տ. Սահակ, Տ. Հայկազուն, Տ. Եզնիկ, Տ. Վարդան, Տ. Կոմիտաս սրբազանները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, արտասահմանյան ուխտավորներ և մասնավոր հրավիրյալներ։

Հանդիսության ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված գրական-գեղարվեստական երեկոն բացվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագով և Ճեմարանի երգչախմբի կողմից երգված Թարգմանչաց վարդապետներին հատուկ «Որք զարդարեցին» շարականով։

Այնուհետև Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը հանդես եկավ թարգմանիչ վարդապետների՝ Ս. Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու խնկելի հիշատակին նվիրված բացման խոսքով։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ. Ա. Ղարիբյանը խոսեց «Մեսրոպ Մաշտոցը որպես գիտնական» թեմայի շուրջ, իսկ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը Ս. Մեսրոպին ներկայացրեց որպես ազգային-եկեղեցական գործչի։

Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը իր սրբազին մասնակցությունը բերեց Ս. Մեսրոպի խնկելի հիշատակին խմբերգերով և արտասանություններով։ Երգչախումբը հաջողությամբ կատարեց Կոմիտասյան «Ով մեծասքանչ դու լեզու», «Լո լո, սեգ Սիփանա սարին վրա» խմբերգերը, «Նմանեալ Մովսիսի» և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականները։ Բ լսարանի ուսանող Հակոբ Պարոնյանը արտասանեց «Գյուտին փառքը» (Սիամանթո), նույն լսարանի ուսանող Վռամշապուհ Ջիհանյանը՝ «Ա Բ Գ-ի դասը» (Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան), Նաիրի Զարյանի «Հայոց լեզուն» արտասանեց Բ լսարանցի Կարապետ Քիրեջյանը, Գ լսարանից Կարպիս Սերայտարյանը արտասանեց «Այս քարին վրա» (Ժ. Ավետիսյան), իսկ Բ դասարանցի Ղևոնդ Վարդանյանը՝ «Օշական»-ը (Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան)։

Հոգևոր Ճեմարանի ուսանողների մանդոլինիստների խմբակը կատարեց մի շարք կոմիտասյան և ժողովրդական երգեր։

Հանդիսության ժամանակ, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Քեշիշյանը կարդաց Ս. Մեսրոպին նվիրված իր քերթվածը։

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը հանդես եկավ Մեծ Սրբի և օրվա մշակութային մեծ տոնի հիշատակին նվիրված օրհնության և երախտագիտության խոսքով։

Ս. Մեսրոպի ծննդյան 1600-ամյակին նվիրված հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի սերտողության սրահում, վերատեսչությունը կազմակերպել էր ընդունելություն Ս. Մեսրոպի հիշատակին։

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։ Ճաշկերույթին մասնակցում էին բազմաթիվ հրավիրյալներ Մայր Հայրենիքից և արտասահմանից։

Ընդունելության ընթացքում մի անգամ ևս ոգեկոչվեց անմահ հիշատակը Ս. Մեսրոպի մեծ անվան և գործի։

Ս. Մեսրոպ Մաշտոցի գործին և հայ մշակույթին նվիրված ջերմ, հայրենասիրական ճառերով հանդես եկան Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ա. Տիրացյանը, պրոֆ. Արշարունին, ճարտարապետ Ռ. Իսրայելյանը, բանաստեղծ Պարույր Սևակը և Հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասատու Գրիգոր Գյուլյանը։

Հոգևոր ճեմարանի դասախոսներ՝ հայոց լեզվի և գրականության դասատու Պարգև Շահբազը և գրաբար լեզվի դասատու Սամվել Անթոսյանը հանդես եկան Մեծ Մաշտոցին նվիրված գրաբար և աշխարհաբար արտասանություններով։

Մայր Աթոռի սարկավագների խումբը, հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողոսյանի ղեկավարությամբ, երգերով իր մասնակցությունը բերեց ընդունելության։

Ներկաները հյուրասիրվեցին հայկական թանապուրով և ավանդական հերիսայով։

Սեղանը փակվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։